

ԵՊՀ արհկոմիտեի նախագահ



Ա.Ռ.Ավետիսյան

## Կ Ա Ր Գ

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությանն անդամակցելու  
(մասնակցելու) կամ ադամությունից հրաժարվելու (հեռացվելու)

1. Սույն կանոնակարգով /այսուհետ կարգ/ սահմանվում են ԵՊՀ արհեստակցական կազմակերպությանն /այսուհետ կազմակերպություն/ անդամակցելու (մասնակցելու) կամ ադամությունից հրաժարվելու (հեռացվելու) հարցերը:

2. Կազմակերպությանն անդամակցել կարող են ԵՊՀ գործատուի հետ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող այն աշխատողները, ովքեր ընդունում են կազմակերպության կանոնադրությունը, մասնակցում են կազմակերպության գործունեությանը, ծրագրերի իրականացմանը և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված չափով մուծում են անդամավճար:

3. Կազմակերպությանն անդամակցելը (մասնակցելը) կատարվում է ԵՊՀ աշխատողի գրավոր դիմումի համաձայն՝ Արհկոմիտեի կողմից հաստատված դիմումի ձևով: Դիմումը գրելու և ստորագրելու պահից սկսած ԵՊՀ աշխատողը համարվում է կազմակերպության անդամ (մասնակից):

4. Կազմակերպության անդամությունից հրաժարվելը կատարվում է կազմակերպության անդամի գրավոր դիմումի համաձայն՝ Արհկոմիտեի կողմից հաստատված դիմումի ձևով: Դիմումը գրելու և ստորագրելու պահից սկսած կազմակերպության անդամը դադարում է համարվել կազմակերպության անդամ (մասնակից):

5. Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է կազմակերպության նախագահի ներկայացմամբ՝ արհկոմիտեի որոշմամբ՝

կանոնադրության պահանջները խախտելու կամ կազմակերպության պատիվն ու հեղինակությունը արատավորելու դեպքում:

6. Կազմակերպության անդամների ԵՊՀ գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրվելը, աշխատանքի վարձատրության չափը, արտոնությունները, աշխատաժամանակի ռեժիմը փոխվելը, ոչ լրիվ աշխատաժամանակ սահմանվելը կամ վերացվելը, տարակարգերը և պաշտոնների անվանումները փոխվելը հիմք չեն կազմակերպությանն անդամությունը դադարեցնելու կամ անդամակցության նոր դիմում գրելու համար: